ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 11/02/18

ՂՀ-ՀՕՄՀ-ՄԱԾՁԲ-18107

ք. Երևան «26» փետրվարի 2018 թ.

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Միքայել Ղարաքեշիշյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմենպրես» Պետական լրատվական գործակալություն ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արամ Անանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հայտարարությունների տպագրության և հրապարակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2018թ. հունվարի 8-ից առաջացած հարաբերությունների վրա։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն՝ չընդունել ծառայությունը՝ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ։

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին թերությունները շտկելու համար։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ։ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը։

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2)։

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.3 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 60000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝ 1մ^2 գինը կազմում է 150 ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 7 բանկային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 % չափով:

5.3 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4 Տույժերի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված ժամկետով:

6.2 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

6.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

6.4 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

6.5 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<u>ԿԱՏԱՐՈՂ</u>

«Արմենպրես» Պետական լրատվական
գործակալություն ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 220553330048000
ՀՎՀՀ 01506041

Տնօրեն ____________ Ա. ԱՆԱՆՅԱՆ

<u>ՊԱՏՎԻՐԱՏՈՒ</u>

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի
համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային
կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ900252101390
ՀՎՀՀ 06954104

Համայնքի ղեկավար՝ ---------------------------------------Մ.Ղարաբեշիշյան

Հավելված N 1
26 փետրվարի 2018 թ. կնքված
11/02/18պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
	Ծառայության անվանումը	տեխնիկական բնութագիրը	չ/մ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Միավորի գինը	հասցեն	Ժամկետը
1	Հայտարարությունների տպագրման և հրապարակման ծառայություններ	Տեղական ինքնակառավարման մարմինների հայտարարություններ՝ աճուրդ-վաճառք, վարձակալություն, մրցույթ բնապահպանական կամ առնչվող ճյուղերի հայտարարություններ՝ հանրային հայտագրում, հասարակական քննարկումներ, հանրային իրազեկում, լսումներ, արտերկրյա և միջազգային կազմակերպությունների, բարեգործական առաքելությունների, ներկայացուցչությունների, ընկերությունների հայտարարություններ ու տեղեկացումներ	սմ ^{2}	60,000	150	ք. Երևան, Սարյան 22	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2018թ.

ԿԱՏԱՐՈՂ

«Արմենպրես» Պետական լրատվական գործակալություն ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
հ/հ 22055233004 8000
ՀՎՀՀ 01506041

Տնօրեն _____ Ա. ԱՆԱՆՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հհ900252101390
ՀՎՀՀ 06954104

Համայնքի ղեկավար ----------Մ.Ղարաքեշիշյան

Հավելված 2
«26» փետրվարի 2018 թ. կնքված

11/02/18պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

——. —— 2018թ.

Պայմանագրի անվանումը՝ Ստեփանավանի համայնքապետ Միքայել Ղարաքեշիշյանի և Արմենպրես ՓԲԸ տնօրեն Արամ Անանյանի միջ կնքված ծառայությունների մատուցման պայմանագիր

Պայմանագրի համարը՝ 11/02/18

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «26» «02» 2018թ.

Պատվիրատուն՝ ի դեմս Ստեփանավանի համայնքապետ Միքայել Ղարաքեշիշյանի և

Կատարողն, ի դեմս Արմենպրեսս ՓԲԸ տնօրեն Արամ Անանյանի

Ստորագրում են սույն արձանագրությունն առ այն, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների					
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակակա և ցուցանիշը	կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը	Վճարման ժամկետը
			փաստացի	փաստացի		
1	Հայտարարությունների տպագրման և հրապարակման ծառայություններ	Տեղական ինքնակառավարման մարմինների հայտարարություններ՝ աճուրդ-վաճառք, վարձակալություն, մրցույթ բնապահպանական կամ առնչվող ճյուղերի հայտարարություններ՝ հանրային հայտագրում, հասարակական քննարկումներ, հանրային իրազեկում, լսումներ, արտերկրյա և միջազգային կազմակերպությունների, բարեգործական առաքելությունների, ներկայացուցչությունների, ընկերությունների հայտարարություններ ու տեղեկացումներ	400 սմ²	15.12.2018	60,000	25.12.2018

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 2.1
«26» փետրվարի 2018 թ. կնքված
№ 11/02/18 պայմանագրի

ԱԿՏ N 11

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արմենպրես» Պետական լրատվական գործակալություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «26».02.2018թ. կնքված N 11/02/18պայմանագրի շրջանակներում Կատարողը ——. ——. 20—թ. հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Հայտարարությունների տպագրման և հրապարակման ծառայություններ	սմ ^{2}	400

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնող	Ընդունող
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն